

**ՀՍԽՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ**

**Լ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ*

1920-ական թվականներին ԽՍՀՄ-ի և նրա կազմում գտնվող ՀՍԽՀ-ի սոցիալ-տնտեսական ծանր կացությանը և այդ վիճակն անհապաղ շտկելու գործին էին միտված վիճակագրությունները և մարդահամարները, քանզի վերջիններս հնարավորություն են ընձեռում պարզելու երկրում միավոր ժամանակամիջոցում տեղի ունեցած տնտեսական, հասարակական, մշակութային, սոցիալական, էթնիկ, կրոնական, զբաղվածության, ժողովրդագրական և այլ բնույթի գործընթացները և ըստ այդմ էլ վերլուծելու ու հստակեցնելու երկրի հետագա զարգացման թիրախային ուղղությունները:

1926 թ. հոկտեմբերին Խորհրդային Միությունում անցկացվեց առաջին համամիութենական մարդահամարը: Մինչ այդ, իհարկե, տնտեսական և ժողովրդագրական նկատառումներով Խորհրդային Հայաստանում կենտրոնական վիճակագրության վարչության կողմից 1922 թ. հոկտեմբերին անցկացվեց գյուղատնտեսական վիճակագրություն, որն ընդգրկեց հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերը, բացի Երևան և Լենինական (Գյումրի) քաղաքներից, որոնց վերաբերյալ տվյալները վերցվել են նույն թվականի մայիսի 15-ին Երևանում և 1923 թ. Լենինականում կատարված քաղաքային վիճակագրությունների հաշվետվություններից<sup>1</sup>:

Նշենք, որ ՀՍԽՀ տարածքում կատարված բնակչության հաշվառումները մոտավոր են եղել՝ կապված որոշակի դժվարությունների հետ: Խոսքն այն մասին է, որ օբյեկտիվ պատճառներով հաշվառումից դուրս են մնացել բնակչության մի զգալի մասը, զորամասերը, երկաթուղով ճանապարհորդները, երկաթուղու բանվորները, որոնք չէին կարող 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութ դառնալ, ինչպես նաև քոչվորներն ու գաղթականները՝ նրանց մշտական շարժման մեջ լինելու պատճառով:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ Կենտվիճվարչության կառավարիչ Աշ. Տեր-Հովսեփյանը գրում է. «Անհրաժեշտ է Հայաստանի ամբողջ բնակչությունը

<sup>1</sup> Տե՛ս Հ. Հարությունյան, Նոր Բայազետի գավառը 1920-1930 թթ., Եր., 2015, էջ 38:

ընդունել ոչ թե 781.011 շունչ, այլ առնվազն 10 %-ով պետք է բարձրացնել և ընդունել 859.112 հոգի»<sup>1</sup>:

Բացի դրանից՝ 1922 թ. գյուղատնտեսական վիճակագրությունն ունի այլ թերություններ ևս. հնարավորություն չի տալիս որոշելու գյուղացիության սոցիալական շերտավորումը, չի անդրադառնում բնակչության կրթամշակութային կյանքին, տարիքային և այլ հարցերի:

Այս տեսակետից 1926 թ. մարդահամարը թե՛ իր ծրագրային, թե՛ բովանդակային, թե՛ հաշվեգրման ենթակա ուղղությունների և թե՛ հավաքված նյութի հարստությամբ ու ճշգրտությամբ շահեկանորեն տարբերվում է վերը նշված վիճակագրական հաշվեգրումներից:

Ի տարբերություն 1922 թ. գյուղատնտեսական հաշվեգրման՝ 1926 թ. մարդահամարն ընդգրկելու էր ՀՍԽՀ բոլոր բնակավայրերը և ամբողջ բնակչությանը, ընդ որում ոչ միայն առկա, այլև մշտական կեցողներին: Այն անցկացվելու էր 1926 թ. ընթացքում, իսկ հավաքված նյութերը պետք է դասակարգվեին և մշակվեին 1927 և 1928 թթ.<sup>2</sup>:

ԽՍՀՄ Ազգային վիճակագրական կոմիտեն մարդահամարի աշխատանքների կազմակերպան և անցկացման ծախսերի համար հատկացրեց 30.000.000 ռուբլի, որից Խորհրդային Հայաստանին տրվեց շուրջ 250.000 ռուբլի<sup>3</sup>:

1926 թ. մարդահամարն ուներ 4 հիմնական ուղղություն՝ ժողովրդագրություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն և առևտուր:

Մեզ հետաքրքրողը ժողովրդագրական ուղղությունն է՝ քննության առնելու համար Խորհրդային Հայաստանի գյուղական բնակչության թվաքանակը, աճի աղբյուրները, սեռատարիքային և ազգային կազմը:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՍԽՀ բնակչության թվաքանակը շարունակաբար ավելացել է: Բավական է նշել, որ արդեն 1926 թ. ՀՍԽՀ-ում ապրող բնակչության թիվը հասնում էր 880.464 մարդու, 1922 թ. 781.011-ի դիմաց: Այսինքն՝ չորս տարվա կտրվածքով հանրապետությունում բնակչության թվաքանակը աճել է 99453 շնչով կամ 11,2

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 163, ց. 1, գ. 1474, թ. 3 (այսուհետ՝ ՀԱԱ):

<sup>2</sup> Տե՛ս Խորհրդային Հայաստան, 14 հունվարի, 1926:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 404, թթ. 56-58, 69-71:

%-ով: Ընդ որում առավել բարձր տեմպերով է աճել գյուղական բնակչությունը: Նշված տարիներին Խորհրդային Հայաստանի գյուղական բնակչության թվաքանակի աճն ըստ գավառների ներկայացնենք ստորև բերված № 1 աղյուսակի տվյալներով<sup>2</sup>.

Աղյուսակ № 1

<u>Գավառներ</u>	1922 թ. բնակչություն			1926 թ. բնակչություն			բացարձակ աճ	%
	<u>նկ.</u>	<u>առ.</u> %	<u>հզ.</u> %	<u>նկ.</u>	<u>առ.</u> %	<u>հզ.</u> %		
<u>Երևան</u>	97311	49874 51,2%	47437 48,7%	110916	56683 51,1%	54233 48,8%	13605	12,2%
<u>Դառաազատի</u>	25648	13507 52,6%	12141 47,3%	28494	14961 52,5%	13533 47,4%	2846	9,9%
<u>Դիլիջան</u>	66680	34786 52,1%	31894 47,8%	69940	36128 51,6%	33812 48,3%	3260	4,6%
<u>Զանգեզուրի</u>	63533	32808 51,6%	30725 48,3%	64717	32110 49,6%	32607 50,3%	1184	1,8%
<u>Էջմիածնի</u>	85261	43398 50,9%	41863 49%	100683	51331 50,9%	49352 49%	15422	15,3%
<u>Լենինականի</u>	111648	55145 49,3%	56503 50,6%	124480	61546 49,4%	62934 50,5%	12832	10,3%
<u>Մեղիի</u>	6660	3398 51%	3262 48,9%	6978	3751 53,7%	3227 46,2%	318	4,5%
<u>Նոռ-Քաղաքի</u>	79076	40109 50,7%	38967 49,2%	92091	46247 50,2%	45844 49,7%	13015	14,1%
<u>Փամբակ-Լոռիի</u>	101371	51830 51,1%	49541 48,8%	115067	57968 50,3%	57099 49,6%	13696	11,9%
<u>Շնորհաբեր</u>	637.188	324.855 50,9%	312.333 49%	713.366	360.725 50,5%	352.641 49,4%	76178	10,6%

<sup>1</sup> Հաշվարկը կատարվել է ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1474, թթ. 47-48, գ. 1652, թ. 10, Բյուլետեն Հայաստանի Կենտրոնական վիճակագրական վարչության, № 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր 1926 թ., էջ 1 տվյալների հիման վրա:

<sup>2</sup> Աղյուսակը կազմվել է ՀԱԱ ֆ. 163, ց. 2, գ. 1474, թ. 47-48 և գ. 1652 թ. 10 տվյալների հիման վրա:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ հանրապետությունում նշված տարիներին գյուղական ամբողջ բնակչությունը 637.188 հոգուց հասել է 713.366-ի կամ աճել է շուրջ 1,2 անգամ (10,6 %-ով): Բնակչության թվաքանակի ընդհանուր աճի մեջ արական սեռի տեսակարար կշիռը կազմել է 50,1 %, իսկ իգական սեռինը՝ 49,4%: Գյուղական ամբողջ բնակչության միջին տարեկան աճի տեմպերից ցածր ցուցանիշ են արձանագրվել Զանգեզուրի, Մեղրիի, Դիլիջանի, Դարալագյազի գավառներում: Ավելի բարձր ցուցանիշով առանձնապես աչքի են ընկել Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) և Երևանի գավառները: Աճի ցածր տեմպերը պայմանավորված էին ծնելիության ցածր և մահացության բարձր մակարդակով: Ծնելիության ընդհանուր գործակցի վրա էական ազդեցություն են ունեցել ամուսնությունների թվի աճը և ամուսնալուծությունների նվազումը: Այս երևույթը հետևանք էր նաև հանրապետությունում բնակչության աշխատանքային և կենցաղային պայմանների շրջափելի բարելավման:

Ընդհանրապես բնակչության աճը կատարվում է երկու ճանապարհով՝ բնական և մեխանիկական: Հիմնական աղբյուրը բնական աճն է, որը որոշվում է միավոր ժամանակամիջոցում ծնվածների և մահացածների տարբերությամբ:

1926 թ. գյուղական բնակչության բնական աճը ներկայացնենք ներքոհիշյալ աղյուսակով<sup>1</sup>:

Աղյուսակ № 2

№	<u>Գավառներ</u>	<u>Ծնունդ</u>	<u>Մահ</u>	<u>Բնական աճ</u>	<u>%</u>
1.	<u>Երևան</u>	6318	2162	4156	65,7%
2.	<u>Դարալագյազ</u>	1813	435	1378	76%
3.	<u>Դիլիջան</u>	3496	726	2770	79,2%
4.	<u>Էջմիածին</u>	6671	2062	4609	69%
5.	<u>Զանգեզուր</u>	3223	871	2352	72,9%
6.	<u>Լենինական</u>	7443	2590	4853	65,2%
7.	<u>Մեղրի</u>	399	144	255	63,9%
8.	<u>Նոր-Բայազետ</u>	4899	1690	3209	65,5%
9.	<u>Լոռի-Փամբակ</u>	6082	1457	4625	76%
10.	<u>Ընդամենը գավառներում</u>	40344	12137	28.207	70%

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ըստ Բյուլլետեն Հայաստանի Կենտրոնական վիճակագրական վարչության 1926 թ. տվյալների: /Աղյուսակում ընդգրկված չեն քաղաքները/:

Ըստ աղյուսակի տվյալների՝ 1926 թ. ՀՍԽՀ-ում 40344 ծննդի դիմաց մահացությունը եղել 12137՝ այսինքն ծնվածների մեջ մահացածների տեսակարար կշիռը կազմել է 70 %-ը (28.207 շունչ):

Այսպիսով, 1926 թ. Խորհրդային Հայաստանի գյուղական բնակչության քանակական աճի 30 %-ը բաժին էր ընկնում բնական վերարտադրությանը:

Հիմնվելով արխիվային տվյալների վրա՝ փորձենք մոտավոր հաշվարկներով ցույց տալ ՀՍԽՀ բնակչության տարիքային կազմը 1926 թ. դրությամբ: ՀՍԽՀ գյուղական բնակչության կազմում 0-14 տարեկան բնակչության (307.596) տեսակարար կշիռը կազմում էր 43,10%, 15-34 տարեկաններինը (214.008)՝ 30%, 35-69 տարեկաններինը (169.132)՝ 23,7%, 70-100 տարեկան և ավելի տարիքային խմբերում (20892 բնակիչ)՝ 3 %: Վիճակագրական տվյալներից նկատելի է, որ գյուղական բնակչության կազմում գերակշռում էր երիտասարդ տարիքային խմբերի տեսակարար կշիռը:

Հատկանշական է, որ 1926 թ. 1922 թ. համեմատությամբ ՀՍԽՀ-ում, բնակչության քանակական կազմի հետ կապված, էական տեղաշարժեր են կատարվել նաև նրա ազգային կազմում, որը ներկայացնում էր այսպիսի պատկեր<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 167, թ. 82:

<sup>2</sup> Աղյուսակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 154, թ. 4 ի տվյալների:

• «Այլ» խմբի մեջ մտնում են այն ազգերը, որոնք նշված չեն աղյուսակում, որոնց ազգությունը կամ պարզված չի կամ չեն ցուցակագրվել:



Ընդամենը	Փամբակ-Լոռի	Նոր-Բայազետ
274444	41980	33928
265275	40120	33392
539719	82100	67320
298586	46934	38250
295802	45396	38658
594388	91790	76935
10,1%	11,8%	14,2%
37366	4804	5656
33824	4500	5010
71190	9304	10666
43537	5409	7646
38689	5172	6813
82226	10581	14459
15,5%	13,7%	3,56%
6502	3869	442
6572	3830	489
13074	7699	931
7321	5249	99
7413	5634	116
14734	10883	215
12,6%	41,3%	
4146	13	83
4374	14	76
8520	27	159
7563	143	208
7567	127	200
15130	270	408
77,5%		5,66%
1266	1092	-
1164	1015	-
2430	2107	-
573	359	-
576	419	-
1149	778	-
1057	-	-
1058	-	-
2115	-	-
1030	-	-
1069	-	1
2099	-	1
47	72	-
66	62	-
140	134	-
260	57	43
180	48	29
440	105	72
14,2%		

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ նշված տարիներին, այսինքն՝ 5 տարվա ընթացքում Խորհրդային Հայաստանում գյուղական հայ բնակչությունն աճել է 54669 շնչով և 539.719-ից հասել է 594.388-ի: Այսինքն՝ աճել է 1,1 անգամ կամ 9,2 %-ով:<sup>1</sup> Այդ աճի մեջ կանայք կազմել են 55,8 %, իսկ տղամարդիկ՝ 44,1 %: Այսպիսով, 1926 թ. 1922 թ. դիմաց գյուղական ընդհանուր բնակչության կազմում հայերի տեսակարար կշիռը գրեթե չի աճել՝ 1922 թ. եղել է 84,7, իսկ 1926 թ.՝ 83,3%<sup>2</sup>:

Նշված տարիներին աճի առավել բարձր ցուցանիշ է գրանցվել մուսուլման (թուրք, կարափափախ, քուրդ, եզդի) բնակչության մոտ՝ 79710-ից հասել է 97356-ի, այսինքն՝ աճել է 18,1%-ով<sup>3</sup>, ընդ որում մուսուլմանների կազմում թուրքերն ունեին բացարձակ մեծամասնություն՝ մինչև 70-80 %:

Ինչպես կարելի է նկատել աղյուսակ N<sup>o</sup> 3-ի տվյալներից, մահմեդականներով խիտ բնակեցված էին Հայաստանի այն շրջանները (Նոր Բայազետ, Շիրակ), որոնք անմիջական սահմանակից էին Ադրբեջանին և Թուրքիային: Բացի դրանից՝ նշված շրջաններն ունեին անասնապահությամբ զբաղվելու համար նպաստավոր պայմաններ, իսկ մուսուլմանների կյանքում անասնապահությունը հաստատուն տեղ է գրավում<sup>4</sup>:

Այժմ անդրադառնանք ՀՍԽՀ գյուղական բնակչության ազգային կազմին ըստ գավառների. Երևանի գավառում բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 110.915, որից հայ՝ 86.611 (78 %), թուրք՝ 19.101 (17,2 %), վելիկոռուս՝ 431(0,3 %), եզդի՝ 285 (0,2 %), պարսիկ՝ 174 (0,1 %), քուրդ՝ 2041 (1,8 %), ասորի՝ 1966 (1,7 %), հույն՝ 284 (0,2 %), հրեա՝ 9 (0,008 %), վրացի՝ 4 (0,003 %), լեհ՝ 3 (0,002 %), էստոնացի՝ 2 (0,001 %), գերմանացի՝ 2 (0,001 %): Մեղրիի գավառում՝ բնակչության ընդհանուր թիվը՝ 6.978, որից հայ՝ 5.459 (78,2 %), թուրք՝ 1.172 (16,7 %), վելիկոռուս՝ 29 (0,4 %), եզդի՝ 318 (4,5 %): Դարալազյազի գավառում՝ 28.494, որից հայ՝ 22.495 (78,9 %), թուրք՝ 5.890 (20,6 %), քուրդ՝ 93 (0,3 %) , հույն՝ 16 (0,05 %): Ջանգեզուրի գավառում՝ 64.707 էր, որից հայ՝ 56.512 (87,3 %), թուրք՝ 3.597 (6,3 %), վելիկոռուս՝ 313 (0,5 %), բելոռուս՝ 184 (0,3 %), պարսիկ՝ 3077 (5,4 %), քուրդ՝ 3 (0,005 %), տաճկաթուրք /օսմանյան/՝ 1021 (1,8 %): Նոր-

---

<sup>2</sup> Հաշվարկը կատարվել է N<sup>o</sup>1 և N<sup>o</sup>3 աղյուսակների տվյալների հիման վրա:

<sup>3</sup> Հաշվարկը կատարվել է նույն աղյուսակների տվյալների հիման վրա:

<sup>4</sup> Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 48:



Բայազետի գավառում բնակչության թիվն էր 92.080, որից հայ՝ 76.961 (83,5 %), թուրք՝ 13.884 (15 %)<sup>1</sup>, վելիկոռուս՝ 201 (0,2 %), եզդի՝ 15 (0,01 %), պարսիկ՝ 416 (0,4 %), քուրդ՝ 603 (0,6 %)։ Լոռի-Փամբակում՝ 114.541, որից հայ՝ 91.385 (79,7 %), թուրք՝ 10.457 (9,1 %), վելիկոռուս՝ 10.964 (9,5 %), մալոռուս՝ 673 (0,5 %), եզդի՝ 186 (0,1 %), պարսիկ՝ 124 (0,1 %), քուրդ՝ 66 (0,05 %), տաճկաթուրք /օսմանյան/՝ 4 (0,003 %), հույն՝ 626 (0,5 %), հրեա՝ 15 (0,01 %), լեհ՝ 11 (0,009 %)։ Էջմիածնի գավառում՝ 100.668, որից հայ՝ 87.367 (86,7 %), թուրք՝ 8.299 (8,2 %), վելիկոռուս՝ 159 (0,1 %) , եզդի՝ 4199 (4,1 %), պարսիկ՝ 322 (0,3 %), քուրդ՝ 44 (0,04 %), ասորի՝ 137 (0,1 %), հույն՝ 41 (0,04 %), հրեա՝ 77 (0,07 %), վրացի՝ 11 (0,01 %), հայ բոշա՝ 12 (0,01 %)։ Դիլիջանի գավառում՝ 69.934, որից հայ՝ 58.955 (84,3 %), թուրք՝ 8.125 (11,6 %), վելիկոռուս՝ 2.344 (3,3 %), եզդի՝ 4 (0,005 %), պարսիկ՝ 5 (0,007 %), քուրդ՝ 63 (0,09 %), մարդվին՝ 419 (0,5 %), հրեա՝ 10 (0,01 %), վրացի՝ 2 (0,002 %), լեզգի՝ 5 (0,007 %), ասետին՝ 2 (0,002 %), Լենինականի գավառում՝ 124.126, որից հայ՝ 108.355 (87,2 %), թուրք՝ 1.405 (1,1 %), վելիկոռուս՝ 279 (0,2 %), եզդի՝ 735 (0,5 %) , պարսիկ՝ 6576 (5,2 %), քուրդ՝ 88 (0,07 %), հույն՝ 40 (0,03 %), վրացի՝ 4 (0,003 %), լեհ՝ 4 (0,003 %)։

Այսպիսով, 1926 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները ցույց տվեցին.

- ՀԽՍՀ բնակչության քանակական կազմը էական փոփոխություն է կրել՝ դրսևորելով աճի միտումներ,
- ՀԽՍՀ բնակչության կազմում ավանդաբար պահպանվել են գյուղական բնակչության աճի բարձր տեմպերը,
- էապես աճել է երիտասարդ տարիքային խմբերի տեսակարար կշիռը:

ՀԽՍՀ իշխանության համար մարդահամարի տվյալները չափազանց կողմնորոշիչ նշանակություն ունեին, այն է.

- ուրվագծել նրա քանակական և սեռատարիքային կազմի տեղաշարժերի միտումները: Ելնելով դրանից՝ կանոնակարգել անկազմակերպ ձևով գյուղից դեպի քաղաք բնակչության տեղաշարժերը,

<sup>1</sup> Նոր-Բայազետի գավառի թուրքերի մեծ թիվը բացատրվում է նրանով, որ 1925 թ. թուրքական մի քանի գյուղեր Դիլիջանի գավառից անցել են Նոր-Բայազետի գավառի կազմ:

• Ռուսների մեջ մտնում են նաև վելիկոռուսները, բելոռուսները, մալոռուսները:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 154, թ. 2:

- մարդահամարն արձանագրեց, որ ՀԽՍՀ-ում մուսուլման բնակչության քոչվորության վերացման խնդրին միանգամայն անբավարար ուշադրություն է նվիրվում, որը խանգարում էր գյուղատնտեսության մասնագիտացմանը և տեխնիկական մշակույթների ներդրմանը գյուղատնտեսության մեջ,
- 1920-ական թվականներին ծավալված արդյունաբերական նորակառույցների շինարարության գործում հաշվի առնել հանրապետության բանվորական ուժի և ներքին ռեսուրսների առկայությունը:

**Քանալի բաներ՝** մարդահամար, վիճակագրություն, բնակչություն, ժողովրդագրություն, ազգային և սեռադարիձային կազմ:

## THE VILLAGE POPULATION OF THE ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC IN ALL-UNION CENSUS MATERIALS OF 1926

**L. M. GRIGORYAN**

*Researcher of History Institute, NAS RA*

In October of 1926, the First All-Union Census was held in the Soviet Union, including the Armenian Soviet Socialist Republic. According to census data, the population of Soviet Armenia has grown mainly due to its reproduction. The village population has grown at a high rate. Significant changes have taken place in its age-matched composition. The age group has seen growth in younger age groups.

## СЕЛЬСКОЕ НАСЕЛЕНИЕ АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ ПО МАТЕРИАЛАМ ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 ГОДА

**Л. М. ГРИГОРЯН**

*Соискатель института истории НАН РА*

В октябре 1926 года в Советском Союзе была проведена первая всесоюзная перепись, в том числе в Армянской Советской Социалистической Республике. По данным переписи, население Советской Армении выросло в основном за счет своего воспроизводства. Сельское население росло высокими темпами. Значительные изменения произошли в его возрастной композиции. В возрастной группе наблюдается рост в младших возрастных группах.